ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՎԱՆԱՁՈՐԻ
ՄԱՆԿԱՏՈՒՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ТРУДА И
СОЦИАЛЬНЫХ ВОПРОСОВ
ВАНАДЗОРСКИЙ
ДЕТДОМ

REPUBLIC OF ARMENIA, MINISTRY OF SOCIAL INSURANCE, VANADZOR ORPHANAGE

377200, ՀՀ, ք. Վանաձոր, Տարոն - 2, ՔՇՀ - 4
PA, г. Ванадзор, Тарон - 2, ГСК - 4
RA, VANADZOR, Taron - 2, TBK - 4

☎ 6 – 01 – 20, 6 – 26 – 89

N 213

« 26 » հունիսի 2014թ.

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2» ծածկագրով գնման ընթացակարգով շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգի շրջանակներում «Վանաձորի մանկատուն» ՊՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու Գնումների աջակցման կենտրոնի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրերով նախատեսված ապրանքներ (գնման հայտը կցվում է):

Մատակարարման պայմաններն են՝ Լոռու մարզ, ք. Վանաձոր:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության գնային առաջարկն անհրաժեշտ է ներկայացնել ք. Վանաձոր, Տարոն-2, ՔՇՀ-4 հասցեով՝ Հ. Ղարաքեշիշյանին՝ մինչև 2014թ. հուլիսի 8-ը, ժամը՝ 10:30-ը:

Գնային առաջարկներ պարունակող ծրարները կբացվեն «Վանաձորի մանկատուն» ՊՈԱԿ-ի շենքում՝ ք. Վանաձոր, Տարոն-2, ՔՇՀ-4 հասցեում՝ 2014թ. հուլիսի 8-ը, ժամը՝ 10:30-ին:

Շրջանակային համաձայնագիր կնքած անձը չի կարող ներկայացնել մեկից ավելի գնային առաջարկ, գնային առաջարկների հավասարության դեպքում ոչ գնային պայմաններին բավարար գնահատված մասնակիցների հետ գները նվազեցնելու նպատակով կազմակերպվելու են միաժամանակյա բանակցություններ:

Եթե հրավերին համապատասխանող հայտեր ներկայացրած մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները, ապա հաղթողին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում ոչ գնային պայմաններին բավարար գնահատված բոլոր մասնակիցների հետ գները նվազեցնելու նպատակով կազմակերպվելու են միաժամանակյա բանակցություններ:

Գնային առաջարկը և դիմումն անհրաժեշտ է ներկայացնել ՇՀԱՊՁԲ-11/2 գնման ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Ընթացակարգի ծածկագիրն է՝ «ՇՀԱՊՁԲ-11/2-ՎՄ-14/11»:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը և գնային առաջարկով ներկայացվելիք փաստաթղթերի օրինակելի ձևերը:

ՏՆՕՐԵՆ Ա.Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ